

ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վարակի աղբյուրը`

HCV-ով վարակված մարդիկ` հիվանդության բոլոր փուլերում:

Հիմնական համաճարակաբանական նշանակություն ունեն առանց կլինիկական ախտանշանների սուր և քրոնիկ պացիենտները:

Փոխանցման ուղիները

Բնական ճանապարհ` վնասված մաշկի և լորձաթաղանթների միջոցով, որը ներառում է`

- Սեռական ճանապարհ

• Կենցաղ-կոնտակտային ճանապարհ (Այս ճանապարհով վարակումը հիմնականում դիտվում է ընտանիքներում, կազմակերպված կոլեկտիվներում կենցաղում վիրուսով կոնտամինացված կենցաղային իրերի` ատամի խոզանակ, ածելի և այլն միջոցով:)

• Մորից երեխային փոխանցման ճանապարհ` հղիության և ծննդաբերության ժամանակ (ռիսկը 2-8%) Քանի որ հակա-HCV հակամարմինները պասիվ կերպով պլացենտայով անցնում են պտղին, հետևաբար երեխան մինչև 12 ամսական կունենա արյան մեջ հակա-HCV հակամարմիններ: HCV վարակված մայրերից ծնված երեխաների մոտ HCV ՌՆԹ-ն պետք է ստուգել 2-րդ և 6-րդ ամսում, կամ հակա-HCV հակամարմինները` 15-րդ ամսում:

Արհեստական ճանապարհ

- Բժշկական կազմակերպությունում բուժական և ախտորոշիչ արյունային, ինվազիվ միջամտությունները
- Բժշկական կազմակերպությունում կոնտամինացված բժշկական նշանակության իրերի օգտագործումը
- Բժշկական կազմակերպությունում վարակված արյան փոխներարկումը
- Թմրամիջոցների օգտագործում (ներարկային, ներքթային)

- Վարսահարդարման և կոսմետիկ միջամտությունները՝ դաջվածքներ, մատնահարդարում, ոտնահարդարում, պիրսինգ, ապարատային կոսմետոլոգիա

HCV վարակի հարուցչի հիմնական փոխանցման գործոններն են՝

- արյունը,
- կենսաբանական հեղուկները՝ սերմնահեղուկը, հեշտոցային հեղուկը:

Մաշկի միջոցով մասնագիտական վարակման ռիսկը կազմում է 1,8

%:

Ռիսկի խմբեր

- Առողջապահության և արտակարգ իրավիճակների ծառայություններ մատուցողները
- Միասեռականներ
- Թմրամիջոցներ օգտագործողներ
- Բազմաթիվ սեռական զուգընկերներ ունեցողներ
- Արյան և բաղադրիչների ռեցիպիենտներ(հատկապես մինչև 1992թ)
- Դաջվածքներ և պիրսինգ ունեցող անձիք
- Լյարդի քրոնիկ հիվանդություններով անձիք
- Երիկամի հիվանդություններով անձիք
- Շաքարային դիաբետով 60տ-ից բարձր անձիք
- Հեպատիտի բարձր տարածվածությամբ երկրներ ճամփորդողներ, ապրողներ
- Հեպատիտով վարակված մորից ծնված երեխաներ
- Բժշկական կամ ատամնաբուժական ծառայությունների ստացողներն այն վայրերում, որտեղ վարակման խիստ վերահսկում չի իրականացվում, ցավոք, դեռ խնդիր է աշխարհում
- Քրեակատարողական հիմնարկի կալանավորներ
- ՄԻԱՎ-վարակ